

թ. ին. բայց նա միենայն ժամանակ և տիեզերաւ կան ժողովներ յատկապէս մէջ բերելով, այս Եր ամենեին չէ յիշում, և առհասարակ նորութղթի բովանդակութիւնը, մանաւանդ փսակեցրափ մասին ունեցած կարծիքը, մեզ տրամադրումէ աւելի ենթագրել, որ նա ի, ժողովից առաջ է զրել իւր թուղթը: Խնչակս պէտք է այս բայրը կէտերը իրար հետ համաձայնեցնել մութն է առ այժմ մեզ համար: Այսպանը միայն պարզ է ի հարկէ, թէ Արասին թրղթեր տանողը նոյն թուղան է, որ կազանկատուցու պատմութեան մէջ* առաջին տեղն է յիշուում՝ Հայոց Յովհաննէս կաթուղիկոսի զըրութեան հիման վերայ Աղուանից երկրից հալածուած խոսվարների շարքում: Ներկայ թղթի մէջ յիշուած Հայոց ժողովը, ուր նոքա քաղիկունականութիւն մերժել են՝ չէ կարող շատ հին լինել. բոլոր խօսքերից երեսումէ, որ վեճերը զեռ նոր են սկսուած, որ որոշ չէ զեռ հարեան եկեղեցիների այս խնդրի նկատմամբ բանած գիրքը, զեռ նոցա փոխադարձ յարաբերութեանց մէջ փոփոխութիւններ մատցնել կարելի է. իսկ այդ ամենը շատ աւելի յարմար է գալիս Զ. դարում, երեսնական քառասնական թուականներին՝ քան Ե. դարում գումարած մի ժողովի: Կատ կարեռ է այստեղ նաև այն հանգամանքը, որ Երուսաղէմի պատրիարքները խառնուում են Հայոց և հարեան եկեղեցիների գործերի մէջ և մի տեսակ իրաւասութիւն են կամենում բանեցնել այդ եկեղեցիների վերայ. որ Հայերն այսպիսի փաղ ժամանակներում փանք ու հաստատուն միաբանութիւն են ունեցել Երուսաղէմում: Մեր կարծիք Հայոց և Երուսաղէմի եկեղեցւոյ մէջ եղած յարաբերութիւնը առանձին նշանակութիւն ունի մեր եկեղեցական պատմութեան մէջ: Ասկ Հայոց հալածերու մասին այնպիսի տգեղ ինքնարտականութեամբ տուած նկարագրութիւնը մի շատ հետաքրքիր տեղեկութիւն է, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս փաղ և ինչպիսի ընդարձակ սահմաններում է սկսուել քրիստոնեայ հաւատակիցների կողմից հալածանքը Հայոց դէմ:

Կ. Վ.

Ս. ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ԱԶՁ.

Ն վերայ Աջոյն եւ Էմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան ..
Առաք. Դաւր. Ժ.

Ա

Հովհանները Սեպուհի վերայ շրջելու ժամանակի մի քարանձաւի մէջ տեսան մի ծերունի՝ կը ունած իւր գաւազանի վերայ, բազուկները տարածած և կանգուն մնացած անշունչ: Ո՞վ էր այդ ծերունին չգիտէին նոքա. «սակայն իմացան ի փառաց լուսոյն, թէ մեծ ծառայ Աստուծոյ է.. քարի կարիսա կուտեցին նորա վերայ և թողին հեռացան:

Հայոց մեծ հովուի՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինն էր, որ ծածկուեցաւ այդ նորանշան շիրմիտակ Սեպուհի միամիտ հովհանների ձեռքով:

Ինչո՞ւ այդպիսի ակցյատութեան մէջ տեղի ունեցաւ ազգիս լուսաւորութեան նահապետի երջանիկ փոխումը. միթէ չար բաղդը հալածել հանել էր նորան մինչև Սեպուհի բարձրաբերձ մենարանները. միթէ մարդատեցութիւնն առաջնորդեց մինչև այդ ճգնարանն այն անձին, որ մարդասիրաբար բազմապատիկ տանջանքների և հնգետասանամեայ տարօրինակ բանտարգելութեան գառնութիւնները կրեց՝ մի ամրող ազգ փրկելու համար. միթէ, վերջապէս, մարդկային ապերախտութիւնը վանեց մլեց նորան բազմամարդ շրջաններից գէպի անմարդաբենակ այրերը, ուր հրեշտակակրօն ծերունին, ի վերջուց փոխի մահուամը ի կարգս հրեշտակաց. պատմութիւնը գրեթէ լուռմ է այս հարցերին արժանաւոր պատասխանը տալու: Բազմաթիւ աւանդութիւններից այսպանը կարելի է իմանալ, որ Ս. Գրիգոր ՚սիկիոյ ժողովից յետոյ, հօտի հովուութիւնն իւր կրտսեր որդուն՝ Ս. Արիստակէսին յանձնելով՝ հեռացաւ իւր ճգնարանն, ուր սովոր էր մինչ ցայն երբեմն երբեմն առանձնանալ, և այլ ևս շերեցաւ աշխարհին: Մովսէս Խորենացին բացատրում է թէ Ս. Լուսաւորիչ առանձնական կեանք ընտրեց այն պատճառով, որ սիրեց լեռներ և ամայութիւն և մոքի հանդարտութեամբ ինքն իրեն մէջ կենդրունանալ, որպէս զի կարողանայ անդրազապէս խօսել և ստուծոյ հետո, Ենթանական չէ մենաւոր կեանքի այսպիսի մի տեսն ունենալ ծերութեան հասակում. սակայն Մ. Խորենացու բացատրում է թէ Ս. Լուսաւորիչ առանձնական միւս աւանդութիւնների նկատմամբ միւս աւանդութիւններին

* Հատոր Բ Գլուխ Ը:

աւելի վսեմ բացատրութիւն են տալիս, որ արժէ յիշատակել: Պատմում են, թէ, երբ Ս. Արիստակես գնաց նիկիա՝ առաջին տիեզերական ժողովին ներկայ լինելու: Ս. Լուսաւորիչ ևս գնաց Տարօն և չորս ամիս մնաց այնտեղ Ընտոն և Կրօնիդես ճգնաւորների մօտ: Նոքա խորհուրդ տուին Ս. Լուսաւորիչն այլ ևս չերևել աշխարհին: Ծածկեան ըզ քեզ ասացին: յառաւել փառացդ մօտ ի ծերութիւնդ: որպէս զմեծն Մովսէս, զի մ' պաշտեացն կ ոսկ կերս քո նորագարձ ժողովուրդդ, և կամ գայթակենեցին ի մեռանելն ք՝ տկարամիտ կարծեօք: Ս. Արիստակեսի բերած հաւատոյ հանգանակն ընդունելուց յետոյ, հետևելով յիշեալ խորհրդին: Ս. Գրիգոր առանձնացաւ Սեպուհ սարի վերայ և «ոչ ևս երեւցաւ յայտնեալ ումեք» «ի Մանեայ այրն կեցեալ աներևութեաբար ամս բազումը» Արդ ճգնութեան ժամանակ, ինչպէս աւանդութիւնն ասում է, Ս. Լուսաւորիչ կամեցաւ ծընկազը գնալ Երուսաղէմ՝ Ս. տեղերին երկրագութիւն տալու: Ճնկների վերայ գնալով, իջաւ նա Սեպուհի գագաթից մինչև ստորոտն, ուր մի ձորակում նորա առջև ելան երկու սերովբէ և յայտնեցին Քրիստոսի պատգամը, որ ասում էր. Պատկառեմ ի քո անտանելի ճգնութենեդ. կաց ի վերայ ոտից քոց, և Ել ի լեառնդ, ուստի իջերդ, և անդ վախճանեցին, և ոչ ոք զիտացէ զմահ քո առժամայն, և ոչ առանուն զքեզի ի պաշտօն բարւոք խրատեալ ի քէն ժողովուրդն քու: * Այս աւանդութիւններից աչա երևում է, որ Ս. Լուսաւորիչ առանձնանալուն և անձանօթ մահով վախճանուելուն պատճառ է եղել մի վերին ցուցումն, և այս այն հեռատես և իմաստուն նորհրդով, որ Քրիստոսի նորահաւատ ժողովուրդը չշփոմէ սրբոց մեծարանքը Ս. Աւետարանի ոգեով հաստատուած աստուածային պաշտամունքի հետ: Այս և աչքի առաջ ունի Մ. Խորենացին, երբ ասում թէ «աստուածային իմն գոցցես տեսչութեամբ» շատ տարիներ անյայտ մնաց Ս. Լուսաւորչի մարմինը, որպէս զի «մի ի պաշտօն առցի ի գեռահաւատ բարսրարու ազգաց»: «Նոյնպիսի վերին ցուցման կամ աստուածային տեսչութեան դործ են առհասարակ Ս. Լուսաւորչի կեանքի այլ նշանաւոր գեպքերն՝ ինչպէս օրինակ նոր վիրապից գուրս գալը, նորահաւատ ժողովրդի առաջնորդութիւնն ստանձնելը, Հայոց Մայր Եկեղեցին կանգնելն և այլն: Հետեւարար զարմանալի չէ, որ նորա անյայտութեան մէջ՝ աշխարհից ծածուկ վախճանուելն էլ բացատրուած է նոյն ոգեով և ուղղութեամբ, ինչ որ նորա կեանքի յիշալի վսեմ բացատրութիւն են առաջաւուած առաջնորդութիւնն էլ բացատրուած է նոյն ոգեով և ուղղութեամբ:

շեալ գեպքերը, Սակայն մտածել, որ Ս. Լուսաւորիչ ունենալով որդիք և թռուներ, ունենալով բաղմաթիւ հոգեւոր և հոգեսուն զաւակներ, ինչպէս էին Ս. Տրդատ արքայն և այլ մերձաւոր աշակերտներն ու բարեկամները, բոլորովին անծանօթ լիներ իւր ճգնութեան ժամանակ, և նոցանից ոչ ոք չհետաքրքրութիւր նորա մասին, անշուշտ, հակառակ է մարդակային բնութեանն և ամէն ժամանակի ու շրջանի ընկերական բարբին: Ուստի կարող ենք հաւանական համարել, որ Ս. Գրիգորի իրեն ցանկութիւնն էր՝ այն կտակն աւանդել իւր մերձաւորներին: ինչ որ աւանդութիւնը դրել է ս. ճգնաւորների և սերովբէների բերանը, որով և կիմանանք, թէ ազդիս Լուսաւորչի մահն և ամփոփումն անյայտութեան մէջ պահուեցան այն պատճառով, որ նորագարձ ժողովուրդը կատարելապէս ընտելանայ քրիստոնեութեան գաղափարին և չլինի թէ: հեթանօսական երկդիմի պաշտամունքներին հետևելով, պաշտօն մատուցանէ իւր Լուսաւորչին:

Քանի որ Դ. գարու յիշատակարանների մէջ Ս. Լուսաւորչի մահուան հանգամանքների վերայ որ և է ակնարկ չկայ, գժուար է, անշուշտ, հաւատալ թէ այդ աւանդութիւններն աւելի ուշ ժամանակներում չեն հիւսուած: բայց և այսպէս ակներեւ է, որ Ե. գարում արդէն կար նոյն աւանդութիւնը Ս. Լուսաւորչի՝ անյայտութեան մէջ «աներևութաբար շատ տարիներ» Սեպուհի վերայ ապրելու, անձանօթ կերպիւ վախճանուելու և հովիւների ձեռքով ամփոփուելու մասին: * Խորենացու պատճած այդ աւանդութիւնը դրէթէ շատ սակաւ տարբերութեամբ կրկնում են և ուրիշ մատենագրներ, Յովհաննէս Քրասիանակերտացին: Ժ. դարում նոյնը պատմելով, ասում է. Անդիտարար իմն թաղեալ ի հովուաց իրը գտեալ զնա ի կարգ ի մն աղքատաց: Ս. Կերսէս Շնորհալին Ժ. Պարում իւր վիպասանութեան մէջ այսպէս է համառօտում յիշեալ աւանդութիւնը.

Հովուապետին անյայտ եղեալ, Լուսոյն մերց լիցն ամփոփեալ, ի հովուական դասուց թաղեալ ժամանական այսուց կարծեցեալ զի որք քրկչին սպասարենալ, նորա զծառայն դիապատեալ, Ուպէս զՄովսէս անքոյ անդում յիշեալ աւանդութիւնը:

Այս մոքով երգում է և Յովհան Երզնկացին իւր շարականի մէջ ԺԴ. գարում, նոյն երգի մոտքը կրնելով և իւր ներբողի մէջ.

Հովովն հակողին ծշմարտի եւ քաջ չովովն պատկերի հովիւրն եղեն հետեւողը. Զոր ամփոփեցին զմարմինն մարտուր մերձ ի յայրն Մանեայ մեզ դեղ ախտից մաքրութեան:

Իսկ սերովբէների երեկլը և Ս. Լուսաւորչին պատգամ տալը, որ պատմել է մեծն Վարդան իւր ներբողի մէջ ԺԴ. գարում, գարձեալ երգում է Երզնկացու շարականի մէջ երկու տեղ.

Հեցթեման սրոբէից կիզիչ կենդանեացն Եղեւ տեսանող հոգով կենդանին, Զանդնդախոր զժողն երկնից կամար յօրինեալ:

Չորի մէջ սերովբէների իջման տեղում, ըստ աւանդութեան, Ս. Լուսաւորիչ իւաչեր կանգնեցի, Վարդանն ասում է, որ «այժմ գեղակ է տեղին» ուր Խաչքն կան Հրաշագործք, և անուն գեղջըն կոչի Սերովբէք մինչեւ ցայսօրու նոյն անունն այդ տեղը կրում է և այժմ: Եւ նոյն շարականի մէջ, սերովբէների իջումն երգելով Երզնկացին բացարում է տեղի անունն այս խօսքերով.

Որում ցանկացան զօսքն սրոբէից, Բերանք հրեղէնք յերկնից ի յերկիր Խոնարհեալ ի տես մարմուկ զգնողին. Որ եւ պատիւ տեղւոյն անուամբն կոչի:

Բ

Ն. Յսպիսի փառաց պատկ հիւսելով ազգին լուսաւորութեան քրտնավաստակ աշխատաւորի ճակատին, մեր նախնիք երկնային, հրեշտակական և աստուածամերձ յատկութիւն վերագրեցին նորան, և այսպիսով անստուգութեան թանձք քոյի տակ ծածկուած մնաց Ս. Լուսաւորչի մահուան և թաղման հանգամանքն աւանդութեան մէջ. Չենք կարող սահկայն հաւաստի չհամարել Փաւստոս Իիւզանդի ցուցումը, որ պարզապէս նշանակում է, թէ Ս. Գրիգոր ամփոփուեցաւ Թորգան աւանում: որ Կարանազեաց գաւառի մէջն է Սեպուհի ստորոտում: Փաւստոս ոչ միայն առանձնապէս Ս. Լուսաւորչի գերեզմանը դընում է այն տեղ այլ և պատմելով նորա որու Ս. Արթանէսի և թոռան Ս. Յուսիկի մահն, առում է: որ վերջիններս էլ ամփոփուեցան «ի գիւղն Թոր-

դան» և առ մեծ հայրապետին Գրիգորի: Յիշելով թէ մի քանի տեղեր կան, որոնք «կանոնաւ և հայրապետացն և ի թագաւորացն պատուեալը լինէին» Փաւստոս իրեւ մի օրինակ էլ նշանակում է Թորգանի եկեղեցին «վասն գերեզմաններ ասելով աշքի առաջ ունի ինչպէս «հայրապետին Գրիգորի» նմանապէս և նորա մօտ ամփոփուած Ս. Արթանէսի և Ս. Յուսիկի, նաև Ս. Տրդատ արքայի գերեզմանները վերջինս պէտք է ամփոփուած լինէր իսկապէս նոյն գաւառի Արշ կամ Կամախ ամրոցում: որովհետեւ այդ էր հին Արշակունի թագաւորների դամբարանը, բայց ինչպէս Փաւստոսի խօսքերից, նմանապէս և այլ աւանդութիւններից երկում է, որ Ս. Տրդատի մարմինն էլ նորա լծակցի մօտ գրուեցաւ: Մ. Խորենացին Տիրամօր պատկերի պատմութեան մէջ յիշում է, որ Ս. Գրիգոր իրեն հետ շրջեցնում էր Ս. Բարդուղիմէսու և առաքելոյ Կարենաց Քարի վերայ կանքնած խաչը, որ յետոյ, ասում է, գրուեցաւ Ս. Տրդատ արքայի գերեզմանի վերայ. և որովհետեւ այդ տեղ խօսքը Հոգեաց վանքի վերայ է, որ հաստատուեցաւ Կարենաց Քարի մօտերը, սխալ հետևութիւն են հանել աւանդութեամբ իւր թէ Ս. Տրդատ արքայի գերեզմանն էլ Հոգեաց վանքումն է. մինչ գեռ Խորենացու պատմութեան մասն և որի մէջ նկարագրուած է Տրդատ արքայի մահն և յուղարկաւորութիւնը (Քաղմալէպ, 1851). այդ հատուածի մէջ պարզ նշանակուած է, որ ս. թագաւորի մարմինը տարան «ի Թորդան» և Հոգեցին զնա ի տեղուոջ զրոսանց մեծին Գրիգորի: զոր պարսպեալ անւանաց իւր պարտէզ (Այրարատ, 392). Ս. Տրդատի գերեզմանն Հոգեաց վանքում գտնուելու աւանդութիւնն, անշուշտ, շատ ուշ է կազմուել և այն թերեւս այն պատճառով, որ Յայսմաւուրի մէջ յիշատակութիւն կայ թէ «յետոյ տարան գաղտարար ի Հոգեաց վանք Ս. Աստուածածնի» (Այրար, 333). Հոգեաց վանքում գտնուելին աւելի յետին դարերի յիշատակարանների մէջ է յիշուում, որոնք սակայն այնքան վատահելի չեն. Վարդանի անունով յայտնի աշխարհազերութեան մէջ, զորօրինակ, այսպիսի բան կայ. Ըաշտունիք Աստան է, որ կայ սուրբ ուխտն Հոգեաց վանքն, ուր կայ կենդա-

նագիր պատկերն Տիրամայր Ս. Աստուածածնին, զոր երեր Ս. Առաքեալն Քարդուղմ մէսու, և անդ է, ասում է: և գերեզմանն Տրդատայ թագաւորին և Աշխանայ և Խոսրովիդատոյն, և կոչի սա Հաշտէն գաւառ, և այլն. Հակառութիւնները շատ պարզ են. Հոգեաց վանքը Տիգրիսի վերայ է Անձեւցիաց գաւառում: այլ ոչ Խոտանում Վանայ ծովի վերայ, իսկ Հաշտէնը Երադանու հօվառում է. մի այլ տեղ նոյն Վարդանի աշխարհագրութեան մէջ աւուած է է, որ Երադանունի Կօշ աւանումն են .ո. գերեզմանն Յուսէկան և Գանիելին թուանց Ս. Լուսաւորչին: արդէն իմացանք, որ ս. Յուսէկի գերեզմանը Թորդանումն է, իսկ ս. Դանիել, որ ս. Լուսաւորչի թուր չէ: այլ աշակերտը, թաղուած է Տարդին Հացեաց Քրափաս ասուած տեղում Կնանինեան վանքի մօտերը: Այս և այսպիսի ուրիշ շատ օրինակներից կարելի է տեսնել, որ կարելի չէ անպայման հաւատ լնծայել այդպիսի միշտակարաններին:

Աչքի առաջ ունենալով Փաւստոս Քիւզանդի հաջորդած տեղեկութիւնները, որոնք անշօւշտ աւելի արժանահաւատ և միւնոյն ժամանակ նախնական աղքիւրների վերայ են հիմնուած: կարելի է մակարերել, որ Ս. Գրիգորի, Ս. Արթանէսի, Ս. Յուսէկի, Ս. Տրդատի, թերեւս և այլ նոցա մերձաւորների, քնարանը Թորդան աւանն է, Ս. Արիստակէս և Ս. Ներսէս Մեծն ամիսիուտած են Եկեղեցաց գաւառի Թիլն աւանում, որ նոյնպէս Սեպուհի ստորոտումն է, իսկ Ս. Տրդատի որդին Խոսրով Բ. Կատակ ամիսիուտեցաւ Անի կամ Կամախ ամրոցում: * Ս. Խորենացին նոյնպէս յիշումէ: որ Ս. Գրիգորի մարմինն ամիսիուտած է Թորդանում: բայց նա պատմում է, թէ Մանեայ այրում հօվիւների ձեռքով թաղուելուց յետոյ երբ քրիստոնէական հաւատն արդէն հաստատութիւն գտած էր Հայաստանում: գարձեալ վերին ցուցմանք Գառնիկ անունով մի ճգնաւոր գտաւ ս. մարմինը և բերեց գրեց Թորդան գիւղում: Այդ ճգնաւորի անունն և պատմութիւնը Փաւստոսին յայտնի չէ. իսկ միւս պատմիչներն յիշում են, Խորենացուց առնելով: թէ այդպիսի մի անձն եղել է: այդ երեսում է նորանից, որ Սեպուհի վանքը երերից մէկը կոչւում էր Գառնիկայ վանք, այլ կերպ Կառնոյ վանք: ** այժմ Աւագ վանքից ոչ հեռու Կառնի անունով գիւղն է նորա տեղը: Շատ հաւանական է, որ այդ ճգնաւորը Ս. Լուսաւորչի աշակերտներից մէկն էր, որ ճգնում էր նոյն Սեպուհ սարի վերայ. նա առաջինն իմանալով իւր վարդապետի մահն, Եկաւ փոխադրեց նորան Թորդան առ-

ւանք: որ նորա կալուածքն էր, և այնտեղ՝ ինչպէս աւանդութիւնն ասոււմ է, ամփոփեց ս. Նշանաբները նորա հիմնած Եկեղեցու մօս: նորա իսկ զրօսանաց պարտիզի մէջ, իսկ այն աւանդութիւնն իրը թէ Գառնիկին յայտնուեցան ս. Նշանաբներն Ե. գարի վերջում: ինչպէս յետոյ կըտեսնենք, սիսալ է: Թորդան աւանը Քարանազեաց գաւառում և Թիլն աւանն Եկեղեցաց գաւառում երկու Նշանաւոր կէտեր են, որոնք որոշում են Ս. Լուսաւորչի կալուածքի ընդարձակութիւնը. նոցա մէջ տեղն է Սեպուհ սարը: որ իսկապէս Ս. Լուսաւորչի կեանքի վերջին օրերի համար յաւերժական մի յուշարձան է Հայաստանում: Սեպուհի վերայ քայլ չկայ, որ չստիպէ մեզ մտարերել Ս. Լուսաւորչի երկրաւոր կեանքի զանազան վայրկեանները: նորա հարաւային ստորոտները ողողուում են Եփրատի ջրերով: արևելքից հոսում է Գայլ գետը, արեմուտքից Գոմեր. այդ երեք հովիտների հետ խառնուում են Սեպուհի ընդարձակ ձորերն ու ձորակները, որոնց մէջ և պահուած են պէսպէս յիշատակները: Երգէն յայտնի է թէ Ս. Գրիգոր գեռ իրեւ սպասաւոր Տրդատ արքայի որպիսի անտանելի տոնչանքները կրեց Գայլ գետի վերայ Երիզայ աւանում: աղա երբ Հայոց հօվիւ ընտրուեցաւ, ինչպիսի եռանդով խորտակեց կործանեց Երիզայի անահտական, Թիլն աւանի նանէական և Թորդանի սպիտակափառն Քարշամինայ գից մեհեանները. յետոյ իւր հովիտական գործունելութեան ժամանակ շատ անգամ եկաւ առանձնացաւ Սեպուհի վերայ ճգնողական կեանք վարելու, մինչև որ ի վերջոյ այնտեղ մնաց և այնտեղ էլ կնքեց իւր մահկանացուն:

Ցովհաննէս կաթողիկոս Գրասանակերուցին Փ. գարում անձամբ շըցեցաւ Սեպուհի սրբավայրերը և համառօտ նկարագրում է իւր տեսածը: Գնացի, ասում է, այն սուրբ այրը, որտեղ ս. կինն Մանի, և ապա երիցս երանեալ մեր Լուսաւորչին էր բնակել. տեսայ այնտեղ քարանձաւի խորը երում մի փորիկ փորուածք գիւղարամուտ դռներով. նորա մէջ տէրունեան սեղան կար պատուագի համար. ապա գնացի կանգնեցայ այն քարի մօս: որտեղ քեր լուսաւորութեան առիմը երկու օր կանգնած ըստ պասում էր սուրբ Պանի կոյսի վախճանին. այնտեղ ուխտ անելուց յետոյ գնացի սիրաբեհամ աղբերիկն: որ անտաշ քարերով շըշապատուած է և գըրենի: որտեղից որ Ս. Գրիգոր ջուր էր առնուած խմելու: նոյն տեղից և ես թշուաւական արժանացայ ջուր առնելու և խմելու. օրհնած հող առայ այն փուլ եկած գարակից, որի մէջ հօվիւները ծածկել էին հոգեւոր պատուական գանձը: նորա վերայ արդէն իմ համանով մի քարուկրեայ եկեղեցից էր

* Փաւատ. բիւզ. Գ. 2. 11, 12, 14 եւ Ծ. 24, 25.

** Ասողիկ. Բ. 5:

շինուած՝ քարանձաւների խորքերում տեսայ կուսակրօն, խարանաղղեաց, բոկագնաց, խոշորաճաշակ մարդիկ, որոնք մնում էին այնտեղ մշտամառնչ աղօթելով. նորա միախառն միասին չեին բնակում, այլ ցանուցիր ամբողջ սարի ստորառում զանազան կայաններ ունեին, և ամեն մէկն իւր տշխատանբով հոգում էր իւր մարմնաւոր պէտքերը, ևս նոցա օրհնութիւնն առնելով, գնացի Թորդան գիւղն «ի տեղի զրոսանաց պարտիզան սրբոյն Գրիգորի որի մէջ իմաստութեան և անմահութեան գանձերն են պահուած, այսինքն կենդանի սոկերը սրբոցն այնտեղ գիշերելով և ուխտո կատարելավ կտրեցի մի կտոր այն հացի ծառից, որ Ս. Լուսաւորիչն էր սոկել իւր ձեռքով. ապա գարձեալ գնացի գեպի սարը և վանքերի մէջ մնացի ինն ամսի չափ. Դրասխանակերտցի կամուզիկոսի այս այցելութիւնից գրեթե չորս հարիւր տարի յետոյ ջերմ ոգեսորութեամբ գլուատեց Սեպուհի և նորա սրբավոյրերի յիշատակը Երզնկացին Յովհանն, Հայրենասիրական պարծանք համարելով իրեն համար, որ Ս. Լուսաւորիչ ապրել և գործել է իւր Յովհանի ծննդավայրում. Երզնկացին, ի թիւս այլոց, յիշում է այն երկու աղբիւները, որոնք Ս. Լուսաւորչի աղօթքով նոր բնութիւն վաստակեցին. նոցանից մէկը կոյրին տեսութիւն տալու զօրութիւն ստացաւ և կոչուեցաւ Լուսոյ ազքիւր, միւսն իւր աղի համը փոխեց և կոչուեցաւ բարեհ համ նա յիշում է ս. Տրդատ արքայի հաւլունի թուրը, որ խաշանիշ փայլում է Սեպուհի զլիսին օգի մէջ ըստ աւանդութեան, Ս. Գրիգոր ինքն օծեց այդ թուրն և զրեց Սեպուհի վերայ. Զէնն արքայական, ասում է Յովհանն զսպանմանն գործի կենաց արքային յօրինէր ի կենաց գործիս, և կայ այժմ ի պահեստի ի քեզ, ովք բարեբախտ և ամենագոյն Սեպուհ (առև և շարական «Խորհուրդ խաչելոյն» և այլն). ս. Տրդատի այդ կայծակէ կամ հաւլունի թուրն, ասում են, ինքն հսկայազօր արքայն հանեց մէկ գի նետեց, երբ ուզում էր առանձնանալ՝ Սեպուհի վերայ Ս. Գրիգորի հետ միասին ճգնելու. բայց թուրը գետին չընկաւ, այլ օգի մէջ կախուած մնաց և այնպէս լցուի նման մինչև օրս ցոլում է Սեպուհի վերայ փայլատակներ արձակելով երբեմն գագաթի բարձրութիւնից *.

Սեպուհի զանազան մասերն և յատկութիւնները դրուատելուց յետոյ Երզնկացին իւր խօսքն ուզզում է Թարանալեաց գաւառին, յիշում է նորա բնական հարատութիւնը, բացատրելով գաւառի անունն աղի բար ան խօսքերով, նկարագրում է այն աղբիւները, որ ամառն հոսելիս սառչում

պնդանում է, իսկ ձմեռն լնդհակառակը միշտ տաք է և հեղանիւթ, գովում է գաւառի ծաղկաւէտ լեռները, ջրարուխ ձորերը, ջրաղի գարանները և այլն, շեշտելով թէ այդ հրաշալիքներով չէ որ Դարմաղեաց գաւառը գովիլի է, այլ նորանով որ այնտեղ թաղուեցաւ Ս. Գրիգոր. Ս. յատել Երզնկացին աւելացնում է և այս թէ յերիս տեղիս ի քեզ կազմեալ շինեցաւ շիրիմ հանգստարանի և սուրբ մարմնոյ նշխարաց տեղի և տապան գերեզմանի. Եշքի առաջ ունենալով, որ Երզնկացու յիշած այս երեք շիրիմներից մէկը Թորդանումն է և միւսը Մանեայ այրի մօտ այն գարակը, որի վերայ Դրասխանակերտցու հրամանով եկեղեցի շինուեցաւ և այժմ Հանգիստ Ս. Լուսաւորչի է կոչումն մնում է որոշել երրորդ շիրիմի տեղը, որ մեկ անձանօթ է, Սեպուհի ստորաներում քան և չորս վանք է եղել, որոնք այժմ գրեթե ամայի են և մեծ մասը կիսակործան. նոցա մէջ առաջին և նշանաւոր տեղը բռնում է Աւագ վանքը, որ հիմնել է ըստ աւանդութեան, Ս. Թագէու առաքեալն և ընդարձակել է Ս. Գրիգոր. այդ վանքի եկեղեցիներից մէկը կոչումն է Ս. Լուսաւորիչ. բացի այդ Երիզայի մօտերը կայ Զարչարանաց Ս. Լուսաւորչի կամ Տատասկի վանք, որտեղ պահում եին նորա տանջանաց գործիքներից մի մաս՝ այն է երկամեւ տատասկները որոնցից երկուսը կան և Ս. Եջմիածնի մասունքների մէջ*, գուցէ այս վանքերից մէկում ևս պահուել է Ս. Լուսաւորչի անունով մի շիրիմ. Այդ զանազան շիրիմներն անշուշտ ժամանակի ընթացքումն են յառաջ եկել իբրև ուխտանեղեր. այդ մի սովորական երկային է Հայաստանի շատ վանքերի համար, զորօրինակ մննք գիտենք, որ միւս նոյն ս. Կարապետի, ս. Գեօրգի անունով գերեզմաններ ունին զանազան վանքեր, Վակայն հաւասարին այն է, որ Ս. Լուսաւորչի պատուական մարմնի առաջին ժամանակաւոր հանգստարանն եղել է Մանեայ Եյրի մօտ հովհանների կազմած կարկառը կամ ինչպէս Յովհաննէս. Դրասխանակերտցին է ասում՝ «վլուգեալ գարակը», իսկ վերջին և յաւիտենական բնակարանը Թորդանի շիրիմն էր:

Գ


Թէ երբ և յնչպէս յայտնուեցան և բաժանուեցան Ս. Լուսաւորչի նշխարները, Ճշգրիտ տեղեկութիւններ չընինք, Գիտենք միայն, որ նորա իբրենց վերջն օժիանում չեն մնացել, երախտագէտ ահրունգը համել ցրուել է նորա մասունքներն իբրև սրբութիւններ և մասուցել է արժանի յարգանքը.

Դեռ Ե. դարում Ս. Լուսաւորչի նշխարները Հայոց եկեղեցու սրբութիւնների մէջ նշանաւոր տեղ էին դրաւում՝ Պազար Փարպեցին պատմում է, որ Ս. Վարդանանց ժամանակ, երբ Հայոց նախարարները Պարսից գանից վերաբարձան Հայաստան, նոցա գիմաւորեցին՝ գասր պաշտօնէիցն, բերելով ընդ ինքեանս զնշան կենաստու խաչին և զնշխարս սրբոյ առաք ել անման նահատակին Գրիգորի որին՝ Նմանապէս պատմում է որ երբ Վաշան Մամիկոննեան իրու Հայոց սպարապետ Պարսկաստանից Դուին եւկաւ, Յովհան Մանդակունի հայրապետը գիմաւորեց նորան պատուական նշանաւ խաչին և սուրբ նշանարօք ճգնագ գետե աց նահատակին Գրիգորի որիւ Միւնցին ժամանակ տեմնում ենք, որ Փարպեցու պատմութեան մէջ Ս. Լուսաւորչի յիշւում է միշտ իրու պաշտպան և բարեխօս Հայոց համար. նա կոչւում է «առաքելանման հովիւ», սուրբ նահատակ», «իսոսովվանող»: «Ճգնագ եաց նահատակ»: «առաքող ուղիղ գործոց և ուսուցիչ յստակ և անհեղջ վարդապետութեան»: Քրիստոնէութեան լաւ նշան համարուում է Ս. Լուսաւորչի «ամենասուրբ վարդապետութեանն» հետեւը. ուխտապահ ժողովրդի համար սրբերի վարքից բարի օրինակներ բերելու ժամանակ առանձնապէս պատմում էին Ս. Լուսաւորչի «անապատում» համբերութիւնը, «չարչարանքները» և «ճգնութիւնը»: Փարպեցին պատմում է նմանապէս թէ որչափ սերտ կապուած էին Հայոց սրբերը Ս. Լուսաւորչի անուան հետ և որչափ վստահ էին նորա բարեխօսութեան վերայ, երբ Հրահատ Կամսարականին Պարսից զօրավարը գերի տարաւ, նորա եղբայր ներսէցը քուն ու դադար չունէր, ասում է Փարպեցին, շարունակ սուգ էր անում և հնարներ էր որոնում իւր եղբօրն ազատելու շատ փորձեր փորձեց անձամբ փախսնելու նորան Պարսից բանակից, չյաջողուեցաւ, այդ ջանքերի և խողարկութեան ժամանակ, մի անդամ, երբ նամատեցել էր քի սուրբ տեղի տան նահատակին Գրիգորի, յիշելով, որ սրբերը կարեկից են վշտացեալներին, և մատերելով, որ Ս. Գրիգոր համարձակութիւն ունի Աստուծոյ առաջ, հաւատով սըրտանց օգնութեան կանչեց նորան, Քանզի հնարաւոր է Աստուծոյ ամենայն, զքո ինդիր քաջ ախորժեցի կամի լսել և կատարել, ասում է ներսէ Ս. Գրիգորին: Եւ չսխալուեցաւ, որպէս Փրկչին Վարդապետ կամ Զ. գարի սկզբներում տեղի ունեցած չլինի Ս. Լուսաւորչի մասունքների մի յատնութիւն Հայաստանի յունական բաժնում այլ կերպ գմանած տարութեամբ տարուեցան Բիւզանդիայ, Հայոց թողնելով միայն աջ ձեռքը և մի ուրիշ մասն Նըմանապէս անբացարաններում իւր թէ Ս. Լուսաւորչի նշխարները պատմութիւնները պատմում էին կայսեր Հրամանով բանութեամբ տարուեցան Բիւզանդիայ, Հայոց թողնելով միայն աջ ձեռքը և մի ուրիշ մասն Նըմանապէս անբացարաններում իւր թէ Ս. Լուսաւորչի նշխարները պատմում էին կայսեր Հրամանով բանութեամբ տարուեցան Բիւզանդիայ, Հայոց թողնելով միայն աջ ձեռքը և մի ուրիշ մասն Նըմանապէս անբացարանների կըմնան այն աւանդութիւնները, որոնցից երեսում էին թէ Բիւզանդիայից բերուած են Հայաստան Ս. Լուսաւորչի նշխարներն թ. գարում Աշոտ Ա. թագաւորի ժամանակ, * Ա. յու.

Փարպեցին ոգեսորուած ասում է. Լուսաւորեալ ծագէին երեսը աստուածաէր պաշտօնէիցն ըստ նմանութեան լուսոյն զոր ընտրեցին ի՞քեանք և լուսաւորեցան, իսկ ի վերայ երեսաց մոխրապաշտացն նոյն կերպարան մոխրոյն իշեալ նստէր, յայնժամ յայտնի տեսանէր, շարունակում է նա մի այլ տեղ՝ յըստակ ակն խորհրդոյ ճշմարտասիրացն զ պայ ծառարար յաջորդում մէ ամիրում մն սրբոյն Գրիգորի որի ամենայն ճգնազգեցիկ ընկերովքն իւրովիք ի վերայ երկարահամրեր ուխտապահացն բանակին, ասել կամենալով, թէ Ս. Գրիգորի և իւր նըման նահատակներն աներեւութեամբ աւարտարար ուխտապահացն իւր հետաւ էին, նոցա պաշտպան և նոցա ուրախակից, նոյն Ե. դարում Ս. Գրիգորի անուանը նուիրուած մատուններ և եկեղեցիններ ևս կային. այսպէս օրինակ Պրասխանակերտացին Յովհաննէս, Թովման Արծրունին և Վարդան պատմիչ որոշ յայտնում են, որ Ս. Վարդան Մամիկոննեան Դունի մարզպանին հալածեց, հրոյ պաշտօնեաններին պատուհասեց, բար գինը կործանեց և տեղը շնուց «եկեղեցի մեծ անուանակոչութեամբ որբոյն Գրիգորի»: Նմանապէս Փարպեցին և Ստեփաննոս Օրպելեան յիշում են Բագաւանի Ս. Գրիգորի մատուալը, Ըստ ամէնից հետեւում է, որ Ե. դարում Հայոց մէջ արդէն զարգացած էր Ս. Լուսաւորչի յիշատակն և նշխարները մեծարելու գաղափարը, որն և գործ գրուեցաւ առաւելապէս կրօնական մաքառման ժամանակ, թէ Աստել Ստեփաննոս Ասողիկ աւանդում է, որ Ս. Լուսաւորչի նշխարներն յայտնուել են Վահան Մամիկոննեանի մարզպանութեան ժամանակ, իսկ Միիթար Եյրիվանեցին այդ գէպքը գնում է 500—520 թուականներին. սակայն Փարպեցու խօսքերից և վերը յիշուած բացատրութիւններից պարզ երեսում է, որ այդ սխալ է: Թերեւս, ինչպէս Չամչեանն է կարծում (Ա. 653), Ասողիկի տեղեկութիւնները վերաբերում են Աղուանից Ս. Գրիգորիսի նշխարաց գիւտին. թէ Աղուանի կարող մտածել, որ Ե. դարի վերջերում կամ Զ. գարի սկզբներում տեղի ունեցած չլինի Ս. Լուսաւորչի մասունքների մի յատնութիւն Հայաստանի յունական բաժնում այլ կերպ գմանած տարութեամբ տարուեցան Բիւզանդիայ, Հայոց թողնելով միայն աջ ձեռքը և մի ուրիշ մասն Նըմանապէս անբացարաններում իւր թէ Ս. Լուսաւորչի նշխարները պատմում էին կայսեր Հրամանով բանութեամբ տարուեցան Բիւզանդիայ, Հայոց թողնելով միայն աջ ձեռքը և մի ուրիշ մասն Նըմանապէս անբացարանների կըմնան այն աւանդութիւնները, որոնցից երեսում էին թէ Բիւզանդիայից բերուած են Հայաստան Ս. Լուսաւորչի նշխարներն թ. գարում Աշոտ Ա. թագաւորի ժամանակ, *

ամենայնիւ մեզ համար հաւաստին այն է, որ Ե. դարում կային Վաղարշապատում և ապա Գուբինում Ս. Լուսաւորչի նշխարների, թէ ի՞նչպէս էին նոքա բերուել այնտեղ, յայտնի չէ. գիտենք միայն որ Ե. դարում տեղի է ունենում Ս. Լուսաւորչի նշխարների մեծագոյն մասի փոխագրութիւնը Թորդանից Այրարատ Գրիգոր պատրիկ Մամիկոնեանի ձեռքով։ Այդ պատմում է Մովսէս Կաղանկատուացին. «Ի ժամանակն յայնուիկ, ասում է նա, բերեալ էր իշխանն և մեծ զօրավարն Հայոց ի Թորդանայ ի Պարանաղեաց գաւառէն զպատուական նշխարս սրբոյն Գրիգորի բուլոր զին ամենայն ոսկե բօքն հանգերձ յաշխարհն Հայոց յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք, և հանգուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր մեծին ներսիսի շինեալ էր յանուն սրբոյն Գրիգորի, Այս եղաւ ներսէս Գ. Ծինող կաթողիկոսի ժամանակ (632—671թ), որն և կանգնեց Ս. Լուսաւորչի յիշատակի համար մի հոյակեալ եկեղեցի. Նորա աւերակներն այսօր ել կան Վաղարշապատի արեւելեան կողմը երևանու ճանապարհի վերայ և կոչուում են խանգարած եկեղեցի. Հին ժամանակ այդ եկեղեցու անունն էր «Առապարի Ս. Գրիգոր» կամ «Զուարթնոց եկեղեցի». Սերէսու եպիսկոպոսն ի. գարում այդ եկեղեցու մասին պատմում է, թէ ներսէս Գ. կամեցաւ «շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին ի վերայ Ճանապարհին, յորում, ասեն, ընդ առաջ եղել թաղաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի. շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի. և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաբ արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացնա, Խոկ Յովհաննէս կաթողիկոս Դրասիսանակերտուցին յիշատակում է, որ ներսէս Գ. նոյն եկեղեցու հիմքումն ամփոփեց Ս. Լուսաւորչի մասունքները. «Ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ դնէ, ասում է, զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահել գանձուն երկնաւորի ի գերչաց ապականչաց.» միևնոյն ժամանակ յիշում է, որ Ս. Լուսաւորչի «քրիստոսագրում» և պատուական զլուխոյ խոր տեղ չամփոփեց, «այլ արտաքոյ ի գործոց եղեալ» պահպանում էր գանձերի մեջ ուխտաւորների համար, Զուարթնոց եկեղեցին մի հրաշալիք է համարուել հին ժամանակ իւր շինուածքով. մի յիշատակարանում ասուում է, որ ներսէս Գ. Բիւզանդիոյ Կոստանդ կայսեր ծախքով շինեց «զ բ զ մ ա պ ա յ շ ա ռ ա ռ ի վաղաքու գաշ-

տի ի սուրբն Գրիգոր», Ասողիկ զպանազան յօրինուածով «Հրաշապայծառ եկեղեցի» է անուանում Առապարի ս. Գրիգորը, իսկ Միիթմար Այրիվանեցին 641—690 թուականների մէջ է գնում նորա շինութիւնն և, թերեւ Սամուել Անեցուց առնելով, ասում է. Ծինողն ներսէս շինէ զԱռապարի ս. Գրիգորն զ զ ա ր մ ա ց ո ւ ց ի չ ն տ ի ե զ ե ր ա ց, որ քակեցաւ. ի Տաճկաց, «այելով այդ շինութեան արդի բեկորներին, արդարև, չէ կարելի չզարմանալ չէնքի ընդարձակութեան, չքեզութեան և ամրութեան վերայ. Չորս սեան խոյակները տակաւին կան և մնում են իրեւ ապացցց անցեալ վիշտութիւնների, նոքա այսօր գտնուում են մայր Աթոսի Գէորգեան ձեմարանի գաւթուում. Եւրոպական հնագետները բաւումնափեալ և նկարագրել են այդ խցակները.* նոքա կողովաձև կերտուած ունին և քանդակները շատ նուրբ են իւրաքանչիւր երկուսի վերայ կան միևնոյն յունարէն տառերը խաչաձև քանդակած ներսէս Գ. Ծինողի անունով այցէս.



ΝΑΡΣΟΥ Ներսիսի ΚΑΘΟΛΙΚΟΥ կաթողիկոսի.

Եթե հետեւնք Պրասիսանակերտոցու վկայութեանը, պիտի մտածենք, որ այս խոյակներին համապատասխան խարիսխների տակ, որոնք գեռմնում են վիտակի ներքեւ, պահուած են ս. Լուսաւորչի նշխարներից չորս մաս. Խոկ թէ ի՞ն եղաւ նորա պատուական զլուխու, որ պահուում էր զանձերի մէջ, չենք կարող պատմութիւնից որոշ բան իմանալ, Կաղանկատուացին և Վարդան աւանդուում են, որ Ե. գարում Աղուանից Խորայէլ եպիկոպոսը շատ աղածեց Գրիգոր պատրիկին և ներսէս Գ. կամեուղիկոսին, որ ս. Գրիգորի նշխարներից մի մաս տան իրեն. նոքա յանձն շառան և ասում էին թէ «ոչ ուրեք երրեք բաժնեալ են նշխարը Գրիգորի և ոչ ումեք ունիմք իշխանութիւն հանել մասն ի նմանէ և տալ քեզ», Խորայէլ եպիկոպոսն իւր նպատակին հանելու համար զիմում է Գրիգոր պատրիկի կնոջ Հայոց Տիկին Հեղինեի՝ օգնութեանը, որ Աղուանից երկրից էր. վերջինիս յաջողում է կաթողիկոսին համոզելու և ստանալու Ս. Լուսաւորչի ծնօտի մի մասը, որ Խորայէլ բե-

* Strzyg. das Etschm. Evangeliar 9—11.

րում աեղաւորում է Աղուանից Դիխոյ վանք կոչ-
ուած մենաստանում Աւանդութիւն կայ, որ Ս. Լու-
սաւորչի զլութիւն յետոյ տարուել է Խտապիաւ ուր
Նետապօլ քաղաքում պահուում է նաև ինչպէս պատ-
մում է Զամշեանը (Ա. 635), Ս. Լուսաւորչի
անուանը նուիրուած մի եկեղեցու մէջ:

Այսպէս ուրեմն կանուխ ժամանակներից ըս-
կած բաժան բաժան է լինում մեր ս. Հայրապետի
մարմինը. Նորա նշխարների շնորհիւ կանգնում են մա-
տուռներ և վանքեր Հայաստանում և Հայաստանից
գուրս: Այդ նշխարներից մէկը՝ Ս. Լուսաւորչի
աստամը՝ մի ժամանակ պահուում էր Աւագ վանքում:
Մէկ այժմ մասունքը չկայ սակայն մնում է տու-
ժիւ որ մի նշանաւոր հնութիւն է համարում և
կոչում է Տեղամափ կամ ըստ Խնձինձեանի՝ Գեղ-
թափ: Սա ձեռքի մը չափ միխրագցն փայլուն
քար է, ասում է Գար. վ. Արուանձտեան. Նորա
վերայ նուրբ արուեստով քան գակուած
կայ երկու արծուի յաջմէթագուոր,
ի ձախն թագու հիւ և ի կեդրունին մա-
սունք կամ ակն դնելու տեղմը,
ուր Ս. Լուսաւորչի ակրայն դրած են եղեր. այս
գործ հիանալի և աննման, կաւանքեն թէ Կոստան-
դիանոս ընծայած է մեր Տրդատին կամ Սեղբեստ-
րոս՝ Լուսաւորչին: Ըստ անցրդք և հնախողգք, ա-
սում է նաև յատկապէս հեռի տեղերէ եկած են
զայս տեսնելու, և հիացեր են, շատ ալ չանացեր
են արծաթով կամ այլ և այլ խոստմամբ և հա-
տուցմամբ հանել զայն վանքէն: ինչպէս նաև հնար-
քներ ու հրապոյր ի գործ զնելով, սակայն չեն
յաջողած: Այս հնութեան համար Խնձինձեանը
զրում է այսպէս Դեղթափ կոչեցեալ վեմ: յորում
փորագու եալ կան չորք աւետարանիչք.
զոր սրբոյն Սեղբեստրոսի ասեն տուեալ ի պարզե
Լուսաւորչին: Երկու նկարագրութիւններն * իրար
չեն բանում: Երեւում է, որ երկուսը միւնոյն
բանի վերայ չեն խօսում: **

Կ. Կ.

(Կը շարունակուի)



* Թոր. Աղբ. Բ. 57. Խմֆ. Աշխարհագր. Ա. 103.

** Ահաստանի նիւու սափսկոպսի մոտ էլ մի մա-
տոնք եղել է այս է Ս. Լուսաւորչի մատոյ Առասպելական
տոնդեկութեան սայենով. Կարսէլ է կասկածել մատոնցի իս-
կութեան վերայ: Ցես Թոնի Միութին, 23:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՒԹԻԿՈՒՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԽԵՆՎԵՑԻ

— **Օ**արմանալի եռանդ է ցոյց տալիս կա-
թողիկ եկեղեցին ժԹ: գարավերջին, այդ եռանդը
նկատելի է մարդկային գործունեւութեան և կեան-
քի բոլոր ասպարէղներում ինչպէս կարող են վկա-
յել մեր քրոնիկոնների ընթերցողները: «Կաթողիկ
տարեգութեան» կոչուող շարաթաթերթը իւր վեր-
ջին համարում ծանօթացնում է մեզ ամբազգաւ-
յին, գիտնական, կաթոլիկ համաժողովների: Հետ
և հրաւէր է կարգում մասնակցելու Պ. Համաժո-
ղովին, որ պիտի տեղի ունենայ 1897 թ. օգոստոսի
9—12 ս. 8.

Այդ համաժողովների գաղափարն յղացել է
1885 թուին մի քրանիսացի կանոնիկոս, որ ունեցել
է և իւր զօրաւոր հակառակորդները, Առաջին համա-
ժողովը տեղի է ունեցել Փարիզում 1888-ի ապրիլի
9-ին, երկրորդը կրկննոցն տեղում 1891-ին և երրոր-
դը Բրիսուէլում 1894-ի 3—8 սեպտեմբերի: Համա-
ժողովների գործական յաջողութիւնը պապուցել
է դրա անհրաժեշտութիւնն և այժմ կաթոլիկ եկե-
ղեցու բարձրագոյն հեղինակութեան պատպանեւ-
թեամբ նախապատրաստուում է չորրորդ համագու-
մարը: Առաջին ժողովին մասնակցել են 1.605 կա-
թոլիկ գիտնականներ և գիտութեամբ հետաքրքը-
րուողներ, երկրորդին 2.294, երրորդին 2.538 ան-
ձինք աշխարհիս բոլոր կաթոլիկ երկրներից: Մաս-
նակցողների մէջ են եղել կաթոլիկ հռչակաւոր
գիտնականները: Առաջին համաժողովի աշխատու-
թիւններն հրատարակուել են երկու մեծ հատորով:
երկրորդինը ուժ և երրորդինը իննու որոնց մէջ մարդ-
կային գիտութեան բոլոր ճիւղերի մասին հետազո-
տութիւններ են եղել:

Ի՞նչ է արդեօք կաթոլիկ համաժողովների
նպատակը: Աչա թէ ինչպէս է որոշում այդ նպա-
տակը կաթոլիկ թերթը: Համաժողովների նպա-
տակն է գիտութեան հողի վերայ համախմբել բո-
լոր այն կաթոլիկներին, որոնք իրենց հանգամանք-
ների և ընդունակութեան չափով հետաքրքրուում են
գիտնական հետազուառ թիւններով: Կարեւոր և ան-
հրաժեշտ է, որ կաթոլիկ գիտնականները միանան բա-
լոր իրենց պաշտանակիցների հետ զանազան ասպա-
րէզներում: սրա հետ միասին անհրաժեշտ է, որ
կաթոլիկ եկեղեցու հաւատարիմ օրդիք համախմբ-
րուեն գիտութիւնները յառաջ ասնելու համար:
Այսու պէտք է ապացուցանէ կաթոլիկութիւնը,
որ հակառակ իւր գէմ արծակուած մեղադրանքին: